ներին: Այդ հալածական, տոկուն, ամէն կլիմայի դիմացող մոլաշրջիկների մէջ գտնում է նա մի ամենայարմար հասարակութիւն՝ մի ազատ գաղթաշենք հիմնելու համար, ընտելացնելով նրանց հաստատաբնակութեան եւ աշխատասէր կեանքի: Այդ նպատակով թողնում են նրանք Հնդկաստանը եւ գնում են Աւղանիստան: Հայ-բոշաներին գտնում են միեւնոյն անապատներում, ուր առաջ տեսել էին: Նրանց առաջին ջանքը լինում է՝ համոզել բոշաներին, որ յանձն առնէին մի այնպիսի հեռաւոր գաղթականութիւն, յետոյ սկսում են նախապատրաստել ու վարժեցնել նրանց անձնապաշտպանութեան, որ եթէ յարկ լինէր զէնքի դիմել, բոլորովին անզօր չգտնուէին: Այդ պատճառով նրանք բաւական ժամանակ մնում են բոշաների մէջ: Երեւում էր, որ Կարոյին յաջողել էր Հնդկաստանի հայերից նպաստներ ընդունել, եթէ ոչ, մի այնքան բազմութիւն շարժել իր տեղից՝ առանց ծախքերի չէր կարող լինել: Ամէն ինչ խոստանում էր յաջողութիւն, միայն բոշաները դեռեւս տատանւում էին գաղթել մի հեռաւոր աշխարհ, որ բոլորովին անծանօթ էր նրանց: Այդ էր պատճառը, որ Կարօն ստիպուած էր կրկին վերադառնալ Հնդկաստան, տանելով իր հետ բոշաների մի քանի գլխաւորներին, որ նրանք աչքով տեսնէին իրանց համար պատրաստուած «աւէտեաց երկիրը» եւ հաւատային, որ այնտեղ աւելի լաւ կանցնէր նրանց կեանքը: Այստեղ դու պէտք է լսես մի սիրավէպ, Ֆարհատ, այդ հարկաւոր է քեզ գիտենալ: Ինչպէս ասացի, Կարօն իր ընկերների հետ բաւական ժամանակ մնում է բոշաների մէջ: Մի այդպիսի ուրախ, մշտազուարթ եւ ջերմ կրքերով լի հասարակութեան մէջ, շատ բնական է, որ մեր երիտասարդների տնտեսական մեծ գաղափարները չէին կարող անցնել առանց սիրահարական մանր արկածների: Մի սեւաչեայ աղջիկ գրաւում է Կարոյի զգայուն սիրտը: Կարօն խոստանում է նրան իր սէրը եւ իր ձեռքը, խոստանում է փութով վերադարձ, եւ բոշաների ներկայացուցիչների հետ ճանապարհ է ընկնում: Ռափայէլը եւ Սագօն մնում են բոշաների բանակի մէջ: Բայց մինչեւ Կարոյի վերադառնալը պատահում է մի մեծ դժբախտութիւն: Սկսւում է աւղանների եւ պարսից պատերազմը: Պարսիկները յաղթում են, անցնում են աւղանների երկիրը, կողոպտում են եւ միեւնոյն ասպատակութեան ժամանակ, հանդիպելով բոշաների բանակին, թալանում են նրանց, գերի տանելով բազմաթիւ կանայք եւ աղջիկներ, որոնց թւում գտնւում է եւ Կարոյի նշանածը: Եւ երբ Կարօն ուրախ, լի մեծամեծ յոյսերով վերադառնում է Հնդկաստանից, գտնում է բոշաների բանակը ցրիւ եկած, եւ անապատում նրանց հետքն անգամ չէ տեսնում: Կարող ես երեւակայել Կարոյի դրութիւնը: Մի աւղանցի, որ անապատում ուղտեր էր արածացնում, պատմում է նրան ցաւալի եղելութիւնը: Կարոյի նման մի ամուր բնաւորութիւն միայն կարող էր դիմանալ մի այդպիսի ծանր հարուա-